ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 3-ին, շաբաթ.—*Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Անթիլիաս վերադարձան տ. Գարեգին եպս. Սարգսյանն ու պրն. Ոսկեբերան Արզումանյանը՝ անձամբ տանելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օգոստոս 31 թվակիր նամակը Տ. Խորեն Ա կաթողիկոսին։*

*
* *

Սեպտեմբերի 7-ին, կիրակի.—*Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածնում գտնվող տ. Սարգիս քհն. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց «Ես եմ հացն կենաց» բնաբանով։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Սեպտեմբերի 14-ին, կիրակի.—Խաչվերաց.

Մայր տաճարում, տարվա վերջին տաղավարի առիթով, ս. պատարագ մատուցեց հոգեվոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և քարոզեց «Խաչն ի նախնումն երևեցաւ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան Խաչվերացի թափորին նախագահեց լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։

*
* *

Սեպտեմբերի 15-ին, երկուշաբթի—Մեռելոց.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ համայն հայ նընջեցյալների։

*
* *

Սեպտեմբերի 21-ին, կիրակի.—Բարեկենդան Վարագայ Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Արտեն քհն. Աշճյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ «Խաչ քո երկրպագեմ մեղ ապաւէն» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Սեպտեմբերի 28-ին, կիրակի.—Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգ. տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետն ու սփյուռքից բազում ուխտավորներ, որոնք ժամանել էին սրբալույս մեռոնի օրհնության հանդիսությանը և Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի տոնակատարությանը։